ՊԱՅՄԱՆԱԳԻՐ - 1
էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման

ք. Երևան Երկու հազար յոթ թվականի օգոստոսի «1»

«Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Օպերատոր», ի դեմս գլխավոր տնօրեն Ռ.Յիրիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ Ոստիկանության՝ «Ճանապարհային Ոստիկանություն» Ծառայության, ի դեմս պետ Ի. Իշխանյանի, որը գործում է ՀՀ Ոստիկանության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ «Բաժանորդ», միասին նաև «Կողմեր» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին հանրային օգտագործման համար տրամադրել 177 կարճ համարը, (այուսհետ՝ «Կարճ համար»)՝ Օպերատորի բաժանորդներից մուտքային զանգերի ընդունման նպատակով և հնարավորությամբ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել 177 Կարճ համարին ուղղված մուտքային զանգերի դիմաց՝ սույն պայմանագրով և Օպերատորի կողմից սահմանված կարգով:

2. Պայմանագրի գինը և փոխհաշվարկների կարգը

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետով Բաժանորդին հատկացված Կարճ Համարին ուղղված մուտքային զանգերի համար Օպերատորը գանձում է Բաժանորդից 36 (երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ 20% ԱԱՀ յուրաքանչյուր 1(մեկ) րոպեի համար:

2.2 Մատուցված ծառայությունների վճարման համար հիմք է հանդիսանում Օպերատորի կողմից ներկայացված հաշիվը, որը Բաժանորդին է տրվում յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև 15-ը:

2.3 Վճարումները Բաժանորդի կողմից կատարվում են հաշիվը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա տասնհինգը ներառյալ:

2.4 Կանխավճարային սկզբունքի անցնելու դեպքում Բաժանորդը վճարումները կատարում է հաշվետու ամսվան նախորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1 Օպերատորն իրավունք ունի՝

3.1.1 Սույն պայմանագրի 2.4 և 3.3.6 կետերով սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում՝ անջատել Բաժանորդին տրամադրված Կարճ համարը:

3.1.2 Պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում անցնել մատուցվող ծառայությունների դիմաց վճարման կանխավճարային սկզբունքին:

3.1.3 Անմիջապես, առանց զգուշացման, անջատել Կարճ համարը և լուծել սույն պայմանագիրը, եթե Բաժանորդին տրամադրված Կարճ համարը օգտագործվում է Բաժանորդի կողմից սույն պայմանագրի 1.1, 3.3.2, 3.3.5, 3.3.6 կետերից որևէ մեկի խախտմամբ:

3.1.4 Սույն պայմանագրի 3.3.3 կետի դրույթները խախտելու դեպքում Բաժանորդից պահանջել վնասների հատուցում:

3.1.5 Վերանայել սույն պայմանագրով սահմանված գները՝ այդ մասին նախօրոք 30 (երեսուն) օր առաջ տեղեկացնելով Բաժանորդին:

3.1.6 Լուծել սույն պայմանագիրը՝ Բաժանորդի կողմից ծառայությունների արժեքի հետ անհամաձայնության դեպքում:

3.2 Բաժանորդն իրավունք ունի՝

3.2.1 Օպերատորի կողմից սույն պայմանագրով սահմանված գների փոփոխման հետ չհամաձայնվելու դեպքում, 10 օրվա ընթացքում գրավոր ներկայացնել

ԳՊ

անհամաձայնություն և միակողմանի խզել պայմանագիրը:

3.3 Բաժանորդը պարտավոր է՝

3.3.1 Վճարումները կատարել սույն պայմանագրի 2-րդ բաժնով սահմանված ժամկետներում և կարգով:
3.3.2 Առանց Օպերատորի համաձայնության Կարճ համարն օգտագործման չտրամադրել երրորդ անձի:
3.3.3 Տրամադրված Կարճ համարը չօգտագործել սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված նպատակներին չհամապատասխանող ծառայություններ մատուցելու համար, որոնք նյութական վնաս և ֆինանսական կորուստներ կպատճառեն Օպերատորին:
3.3.4 Առանց համապատասխան լիցենզիա ստանալու և Օպերատորի հետ համաձայնեցնելու, չօգտագործել տրամադրված Կարճ համարը շահույթ ստանալու նպատակով:
3.3.5 Հաշիվը ստանալուց հետո, 3 օրվա ընթացքում հաստատել այն կամ, անհամաձայնության դեպքում՝ ներկայացնել առարկություններ:
3.3.6 Կանխավճարային սկզբունքին անցնելու դեպքում ընթացիկ ամսվա մինչև 15-ը վճարել առկա պարտքերը և հաշվետու ամսվա կանխավճարը: Հաջորդ ամիսների համար կանխավճարը կատարել հաշվետու ամսվան նախորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ:

3.4 Օպերատորը պարտավոր է՝

3.4.1 Ապահովել Բաժանորդին տրամադրված Կարճ համարի անխափան աշխատանքը:
3.4.2 Սույն պայմանագրի 2.3 կետով սահմանված ժամկետներում Բաժանորդին ներկայացնել հարկային հաշիվ:
3.4.3 Կանխավճարային սկզբունքին անցնելիս ընթացիկ ամսվա մինչև 10-ը վճարման համար Բաժանորդին ներկայացնել առկա պարտքերի և կանխավճարի հաշիվները, իսկ հաջորդ ամիսների համար հաշիվները ներկայացնել մինչև հաշվետու ամսվան նախորդող ամսվա 15-ը:
3.4.4 Սույն պայմանագրում նշված ծառայությունների սակագները փոփոխելիս նախօրոք՝ 30 (երեսուն) օր առաջ այդ մասին տեղյակ պահել Բաժանորդին:
3.4.5 Կարճ համարի ժամանակավոր խափանման դեպքում՝ 5 (հինգ) օրյա ժամկետում վերացնել խափանումը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրի լուծումը չի ազատում Կողմերին միմյանց հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորություններից:
4.2 Կողմերը պատասխանատվություն չեն կրում անկանխատեսելի ուժի (ֆորս մաժոր) ազդեցությամբ պայմանավորված (բնական աղետներ, ՀՀ նախագահի հրամանագրեր, ՀՀ կառավարության որոշումներ, պատերազմներ և այլն) պայմանագրային պարտավորությունների չկատարման համար:
4.3 Պայմանագրի շուրջ ծագած վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով. համաձայնության չգալու դեպքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
4.4 Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի տեխնիկական միջոցների անսարքությունների հետևանքով կապի խափանումների համար:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է անժամկետ:
5.2 Պայմանագրում լրացումներ, փոփոխություններ՝ բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5. կետի կարող են կատարվել միայն երկկողմանի գրավոր համաձայնությամբ, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՊ

5.3 Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել սույն պայմանագիրը, այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին մեկ ամիս առաջ:

Սույն կետում նշված կարգով պայմանագրի լուծման համար մյուս կողմին դիմելու ժամկետը չի կարող տարածվել սույն պայմանագրի 3.1.3 և 3.2.1 կետերի հիմքերով պայմանագրի լուծման վրա:

5.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն՝ 2-ական օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

Օպերատոր	Բաժանորդ
«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ	ՀՀ Ոստիկանություն
ք. Երևան, Արգիշտի 4/1	«Ճանապարհային Ոստիկանություն»
"Արդշինինվեստբանկ" ՓԲԸ	Ծառայություն
հ/հ 247018888880	ք. Երևան, Իսակով 9
ՀՎՀՀ 01551651	N1 "ՏԳՊ"
	հ/հ 900013150041
	ՀՎՀՀ 01840082
Գլխավոր տնօրեն	Պետ
..... Ռ. Յիրիկյան	..... Հ. Հովհաննիսյան
Կ.Տ.	Կ.Տ.

(ԳՊ)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին պայմանագրում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին

ք. Երևան «01» 10 2014 թ.

«Դ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Օպերատոր», ի դեմս գլխավոր տնօրեն Ռ.Յիրիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ Ոստիկանության՝ «Ճանապարհային Ոստիկանություն» Ծառայությունը, ի դեմս ՀՀ Ոստիկանության պետի տեղակալ Ա. Համբարյանի, որը գործում է ՀՀ Ոստիկանության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ «Բաժանորդ», միասին նաև «Կողմեր», հիմք ընդունելով Կողմերի միջեւ «01» օգոստոսի 2007թ. կնքված էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 5.2. կետով նախատեսված դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը որոշեցին փոփոխել պայմանագրի 5.1. կետը այն շարադրելով հետեւյալ կերպ.

«5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից, տարածվում է Կողմերի միջև 2014թ. հունվարի 01-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչեւ 2014թ. դեկտեմբերի 31-ը: Եթե նախքան սույն պայմանագրի ժամկետի լրանալը 30 (երեսուն) օր առաջ Կողմերից ոչ մեկը չի ծանուցում մյուս Կողմին պայմանագրի գործողությունը չշարունակելու իր մտադրության մասին, ապա պայմանագիրը գործողության ժամկետը համարվում է երկարացված 1 (մեկ) տարի ժամկետով՝ նույն պայմաններով:»

2. Կողմերը որոշեցին լրացնել Պայմանագիրը 4.5. եւ 4.6. կետերով՝ հետեւյալ խմբագրությամբ.

«4.5. Բաժանորդը սույնով պարտավորվում է պահպանել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները եւ չձեռնարկել որեւէ գործողություն, որով կարող են խախտվել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները, կապված սույն պայմանագրով նախատեսված իր իրավունքների եւ պարտականությունների հետ, այդ թվում (բայց չսահմանափակվելով)՝ չկատարել առաջարկ, չտալ համաձայնություն, խոստում, չիրականացնել ոչ օրինական վճարումներ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) կաշառքը՝ փողի կամ ցանկացած այլ տեսքով, որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ առեւտրային կազմակերպություններին, իշխանության եւ ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, մանսավոր ընկերություններին եւ նրանց ներկայացուցիչներին:

4.6. Բաժանորդի կողմից Պայմանագրի 4.5. կետով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում, Օպերատորը իրավունք ունի միակողմանի արտադատական կարգով հրաժարվելու Պայմանագրի կատարումից: Օպերատորը չի հատուցում Բաժանորդի վնասները Պայմանագրի՝ սույն կետի համաձայն լուծման դեպքում:»

3. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրն հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը եւ գործում է դրա հետ միաժամանակ, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան չի սահմանվում:

5. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն 2-ական օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

Օպերատոր	Բաժանորդ
«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ ք. Երևան, Արգիշտի 4/1 "Արդշինինվեստբանկ" ՓԲԸ հ/հ 247018888880 ՀՎՀՀ 01551651	ՀՀ Ոստիկանություն «Ճանապարհային Ոստիկանություն» Ծառայություն ք. Երևան, Իսակով 9 N1 "ՏԳՊ" հ/հ 900013150041 ՀՎՀՀ 01840082
Գլխավոր տնօրեն	ՀՀ Ոստիկանության պետի տեղակալ
..... Ռ. Յիրիկյան	..... Ա. Համբարյան
Կ.Տ.	Կ.Տ.